ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 6 փետրվարի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Մ. Թոփուզյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Ելենա Ավետյանի անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ.

1. Քաղաքացի Ելենա Ավետյանը ՀՀ սահմանադրական դատարան է դիմել 30.01.2012թ.: Դիմողը խնդրել է ՀՀ Սահմանադրությանը հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ եւ 133-րդ հոդվածները, ինչպես նաեւ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը:

2. Ըստ դիմողի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը հակասում է ՀՀ Սահմանադրության 18 եւ 31-րդ հոդվածներին, քանի որ թույլ է տալիս սեփականության օբյեկտի օտարում այլ անձի կողմից՝ փաստացի առանց սեփականատիրոջ համաձայնության եւ նույնիսկ առանց գիտության՝ հավելելով, որ խնդրո առարկա դրույթը թույլ է տալիս ստեղծել այնպիսի իրավիճակ, որի պայմաններում սեփականության /համատեղ ընդհանուր սեփականության/ օբյեկտի համասեփականատերը կարող է զրկվել իր սեփականությունից առանց իր կողմից որեւէ գործողություն կատարելու կամ նման գործողությանը համաձայնություն տալու:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ եւ 133-րդ հոդվածների առնչությամբ դիմողը գտնում է, որ հաշտության համաձայնությունը, հանդիսանալով, ըստ էության, պայմանագիր կողմերի միջեւ, հաստատված լինելով դատական ակտով, իրականում հնարավորություն չի ընձեռում երրորդ անձանց, որոնց իրավունքներին կամ օրինական շահերին է այս կամ այն կերպ այն անդրադարձել թե՛ հաշտության համաձայնությունը հաստատելու պահին, թե՛ հետագայում, ունենալու արդյունավետ միջոց իրենց խախտված իրավունքները կամ օրինական շահերը պաշտպանելու համար:

Այս համատեքստում դիմողը նշում է, որ դատարանը պետք է վավերացնի հաշտության համաձայնությունը՝ արգելելով հաշտության համաձայնության կողմերին այսուհետ նույն հարցով դիմելու դատարան, սակայն պետք է հնարավորություն տա երրորդ շահագրգիռ անձանց ընդհանուր կարգով վիճարկելու «հաշտության համաձայնություն» անվանվող գործարքը:

3. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահանջներով, գտնում ենք, որ Ելենա Ավետյանի դիմումի հիման վրա գործի քննությունը սահմանադրական դատարանի կողմից ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 3-րդ մասը դիմողի նկատմամբ չի կիրառվել ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի եւ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համատեքստում՝ չնայած այն իրողությանը, որ այն վկայակոչված է դատական ակտերում: ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2008թ. ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ « ... Դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի վկայակոչումը կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետեւանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում»»:

Անհատական դիմումի հիման վրա գործը քննության ընդունելու նախապայմաններից մեկն էլ, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի, վիճարկվող դրույթի՝ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից կիրառումն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ ՍԴԱՈ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքի 69 հոդվածի 1-ին մասում նշված որեւէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական

կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ:

- ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 33-րդ եւ 133-րդ հոդվածների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց: Դիմողը, մասնավորապես, նշում է, որ «…դատարանը, հաստատելով հաշտության համաձայնությունը, չի պարզել, թե արդյոք դրանով կխախտվեն այլ անձանց իրավունքները եւ օրինական շահերը՝ հիմք ընդունելով միայն սեփականության իրավունքի գրանցման մասին վկայականը»: Ընդ որում, նման մեկնաբանությունների կարելի է հանդիպել դիմումի տարբեր հատվածներում: Փաստորեն դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթների սահմանադրականությունը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Ղեկավարվելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, կարծում ենք, որ այս համատեքստում առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 6-րդ կետերով եւ 69-րդ հոդվածի 1-ին, 7-րդ մասերով, ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Քաղաքացի Ելենա Ավետյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

6 փետրվարի 2012 թվականի
ՍԴԴԿՈ/2-4